ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վայք **15/03/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 10 անդամներ:

Բացակա էին՝ Թարո Ավետյանը, Սոնա Կարապետյանը, Աստղիկ Հակոբյանը, Կառլեն Մինասյանը, Եվա Մովսիսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Մխիթար Մաթևոսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Անուշ Ղազարյանը

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 15-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով.

1.Վայք համայնքի ավագանու 2024 թվականի մարտի 15-ի թվով 3-րդ հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին/զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
2. Վայք համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 19-ին ընդունված թիվ 13-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
3.Վայք համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին /զեկուցող՝ Ն.Հովակիմյան/:
4.Դրամական օգնություն տրամադրելու մասին /զեկուցող՝ Ն.Հովակիմյան/:
5.Վայք համայնքի Մարտիրոս բնակավայրի 1-ին փողոց, 1-ին նրբանցք, 2/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող մշակույթի տան շենքի հարակից հողատարածքը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:

6.Վայք համայնքի Բարձրունի բնակավայրում գտնվող հողատեսքերը համայնքային սեփականություն ճանաչելու և կադաստրային քարտեզում ուղղում կատարելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
7.Վայք համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին /զեկուցող՝ Ռ.Մկրտչյան/:
8.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքում 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու և Վայք համայնքի ավագանու 19.01.2024 թվականի թիվ 3-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին /զեկուցող՝ Ա.Հովսեփյան/:
9.Արտաբյուջետային հաշիվ բացելու մասին /զեկուցող՝ Ա.Հովսեփյան/:
10.Վայքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության և տեխնիկական սպասարկում ու քաղաքացիական աշխատանք իրականացնող անձնակազմի պաշտոնների անվանացանկում լրացումներ կատարելու վերաբերյալ հարցը ևս մեկ անգամ քննարկելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:
11.Վայք համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին /զեկուցող՝ Ա.Ղազարյան/:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 24-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-ԻՆ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԹԻՎ 13-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով և 34-րդ հոդվածի 1-ին մասով.

1.Վայք համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 19-ին ընդունված թիվ 13-Ա «Վայք համայնքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելուն համաձայնություն տալու մասին» որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1 Վայք համայնքի ավագանու թիվ 13-Ա որոշման վերնագրում գրված «Վայք համայնքի գլխավոր հատակագծում» բառերի փոխարեն գրել «Վայք համայնքի Վայք քաղաքի միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթղթերում» բառերը, այնուհետև ինչպես տեքստում:

1.2 Նույն որոշման բովանդակության 1-ին կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ «Տալ համաձայնություն Վայք համայնքի Վայք քաղաքի միկրոռեգիոնալ մակարդակի տարածական պլանավորման փաստաթղթերում Վայք քաղաքի Վ. Սարգսյան փ.1/1 հասցեում գտնվող, «ԱՎԱ ԳՐԱՆԻՏ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 0.6 հա մակերեսով, 10-003-0024-

0349 կադաստրային ծածկագրով հողատարածքում նախապես հաստատված բազմաբնակարան շենքերի թույլատրելի մինչև 5 հարկի փոխարեն կառուցել մինչև 12 հարկ»:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:
Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 25-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետով.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Վայք համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:
2.Ընդունել ի գիտություն, որ համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների և հողերի կառավարման ամենամյա ծրագիրը կազմում է համայնքի հնգամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ մասը:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 26-Ա/

Լսեցին
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, Վայք համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի «Վայք համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու մասին» N 12-Ն որոշմամբ հաստատված կարգով
և հիմք ընդունելով Վայք համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու հարցերի մշտական հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունը՝

1. Վայք համայնքի 2024 թվականի բյուջեի «Սոցիալապես անապահով անձանց աջակցություն» /4729/ հոդվածից դրամական օգնություն տրամադրել Վայք համայնքի հետևյալ բնակիչներին՝

1.1 Լյովա Գառնիկի Գևորգյան՝ 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ
1.2 Միխայել Բարդուխի Ալեքսանյան՝ 30 000 (երեսուն հազար) ՀՀ դրամ
1.3 Համեստ Գառնիկի Վարդանյան՝ 30 000(երեսուն հազար) ՀՀ դրամ
1.4 Լուսինե Ասատուրի Ասատրյան՝ 40 000(քառասուն հազար) ՀՀ դրամ
1.5 Աղվան Վարազդատի Դավթյան՝ 40 000(քառասուն հազար) ՀՀ դրամ
1.6 Վահան Հենրիկի Կոստանյան՝ 40 000(քառասուն հազար) ՀՀ դրամ
1.7 Ֆրունզե Սարիբեկի Կոստանյան՝ 40 000 (քառասուն հազար) ՀՀ դրամ
1.8 Սամվել Հայրիկի Ենոքյան՝ 40 000(քառասուն հազար) ՀՀ դրամ
1.9 Անդրանիկ Գագիկի Հախվերդյան՝ 40 000(քառասուն հազար) ՀՀ դրամ
1.10 Անահիտ Սուրիկի Ավագյան՝ 50 000(հիսուն հազար) ՀՀ դրամ
1.11 Մարիա Վլադիկի Մկրտչյան՝ 50 000(հիսուն հազար) ՀՀ դրամ
1.12 Զոյա Գևորգի Կիրակոսյան՝ 50 000(հիսուն հազար) ՀՀ դրամ
1.13 Սեյրան Գարեգինի Ֆրանգուլյան՝ 50 000(հիսուն հազար) ՀՀ դրամ
1.14 Մարինե Մերուժանի Ղազարյան՝ 50 000(հիսուն հազար) ՀՀ դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 27-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏԻՐՈՍ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ, 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ, 2/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՇԵՆՔԻ ՀԱՐԱԿԻՑ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածի 1-ին մասով՝

1.Վայք համայնքի Մարտիրոս բնակավայրի 1-ին փողոց, 1-ին նրբանցք, 2/1 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող մշակույթի տան հարակից հողատարածքը՝ 0,375 հա մակերեսով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 12032024-10-0002), 10-033-0006-0024 կադաստրային ծածկագրով, նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը՝ նոր հանրակրթական դպրոց կառուցելու նպատակով:
2.Առաջարկել Վայք համայնքի ղեկավարին՝ կնքել գույքի նվիրաբերության պայմանագիր:
3.Նվիրաբերության պայմանագրի կնքման, պայմանագրից բխող պետական գրանցման և այլ վճարներն՝ ամբողջությամբ ենթակա են վճարման նոր սեփականատիրոջ կողմից:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 28-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՐՁՐՈՒՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՈՒՂՂՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 01.06.2010թ. «Կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը» հաստատելու մասին» N 186-Ն հրամանով հաստատված հրահանգի 9-րդ կետի 2-րդ և 5-րդ ենթակետերով.

1.Վայք համայնքի Բարձրունի բնակավայրում գտնվող նշված հողատեսքերը համայնքային սեփականություն ճանաչելու և կադաստրային քարտեզում ուղղում կատարելու մասին.
1.1 Բարձրունի բնակավայրում գտնվող, 0.76 հա մակերեսով, 10-013-0072-0000 կադաստրային ծածկագրով հողատեսքը, որը համայնքի կադաստրային քարտեզում հաշվառված է որպես «անհայտ» քաղաքացու սեփականություն և իրավունք հաստատող որևէ փաստաթուղթ չունի՝ ճանաչել որպես Վայք համայնքի սեփականություն:
1.2 Բարձրունի բնակավայրում գտնվող, 0.67 հա մակերեսով, 10-013-0073-0000 կադաստրային ծածկագրով հողատեսքը, որը համայնքի կադաստրային քարտեզում հաշվառված է որպես «անհայտ» քաղաքացու սեփականություն և իրավունք հաստատող որևէ փաստաթուղթ չունի՝ ճանաչել որպես Վայք համայնքի սեփականություն:
1.3 Բարձրունի բնակավայրում գտնվող, 0.54 հա մակերեսով, 10-013-0068-0000 կադաստրային ծածկագրով հողատեսքը, որը համայնքի կադաստրային քարտեզում հաշվառված է որպես «անհայտ» քաղաքացու սեփականություն և իրավունք հաստատող որևէ փաստաթուղթ չունի՝ ճանաչել որպես Վայք համայնքի սեփականություն:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 29-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆՁՈՐՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14.3-րդ հոդվածի 9-րդ մասով , Կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» N 987-Ն որոշման 9-րդ կետով

1. Տալ համաձայնություն՝
1.1Վայք համայնքի Խնձորուտ բնակավայրում գտնվող, ֆիզիկական անձի սեփականություն հանդիսացող 10-026-0112-0002 կադաստրային
ծածկագրով, 0.78801 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի (հողատեսքը՝ այլ) նպատակային նշանակությունը փոխել որպես
բնակավայրերի (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) նպատակային նշանակության հողերի:
1.2Վայք համայնքի Խնձորուտ բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 10-026-0109-0001 կադաստրային ծածկագրով,
2.5500 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի (հողատեսքը՝ այլ) նպատակային նշանակությունը փոխել որպես բնակավայրերի (գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման) նպատակային նշանակության հողերի:

2. Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 30-Ա/

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 19.01.2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 3-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և «Տեղական տուրքերի ու վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներին համապատասխան և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով,

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքում օրենքով սահմանված տեղական տուրքերի 2024 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելված 1-ի:
2.Սահմանել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքում
օրենքով սահմանված տեղական վճարների 2024 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելված 2-ի:
2.1.Համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվելու համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի 50 %-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել միևնույն ընտանիքից մանկապարտեզ հաճախող երկրորդ և հաջորդ, ինչպես նաև միակողմանի ծնողազուրկ երեխաների համար, և 100 %-
ի չափով նվազեցման արտոնություն սահմանել Արցախյան պատերազմում և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության համար զոհվածների, ՀՀ պաշտպանության նախարարության զորամասերում ծառայության ժամանակ զոհված կամ հաշմանդամ դարձած

զինծառայողների, հայ-ադրբեջանական պատերազմում անհայտ բացակայող համարվողների և երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար:
2.2. Համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների ծառայություններից օգտվելու համար համայնքի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի 50 %-ի չափով նվազեցման արտոնություն սահմանել ընտանեկան նպաստ ստացող ընտանիքի երկրորդ և հաջորդ երեխաների, ինչպես նաև միակողմանի ծնողազուրկ և 100 %-իչափով նվազեցման արտոնություն սահմանել արցախյան պատերազմում և Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության համար զոհվածների, ՀՀ պաշտպանության նախարարության զորամասերում ծառայության ժամանակ զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների, հայ-
ադրբեջանական պատերազմում անհայտ կորած համարվողների երեխաների և երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար:
3.Ուժը կորցրած ճանաչել Վայք համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 19-ի թիվ 3-Ն «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքում 2024 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափեր սահմանելու մասին» որոշումը:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 31-Ա/

Լսեցին
ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԱՄ ՀՈՎՍԵՓՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասով.

1. Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը «Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում – Փուլ 2» ծրագրի շրջանակում տեխնիկատնտեսական ուսումնասիրություններ իրականացնելու նպատակով արտաբյուջետային հաշիվ բացելու համար՝ բաժին՝ 01, խումբ՝ 05, դաս՝ 01, ենթադաս՝ 01:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 32-Ա/

Լսեցին
ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՈՒ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՑԱՆԿՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԸ ԵՎՍ ՄԵԿ ԱՆԳԱՄ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 07.03.2024 թվականի թիվ 01/08.2/1648-2024 և թիվ 01/08.2/1649-2024 գրությունները.

1.Քննարկել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի փետրվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկը հաստատելու մասին» N 312-Ա հրամանով հաստատված անվանացանկում լրացում կատարելու մասին հարցը.
2. 2024 թվականի հունվարի 19-ի ավագանու թիվ 6-Ա որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի «Համայնքային ծառայության պաշտոններ» բաժնի 2-րդ տողով սահմանված գլխավոր մասնագետի հաստիքը թողնել անփոփոխ:
3. 2024 թվականի հունվարի 19-ի ավագանու թիվ 6-Ա որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի «Քաղաքացիական աշխատանք» բաժնի 2-րդ տողով սահմանված «Տեղական տուրքեր հավաքագրող» հաստիքը վերանվանել «համակարգող (գյուղական բնակավայրերում հանրային լսումների գործընթացի իրականացման պատասխանատու)»:
4. 2024 թվականի հունվարի 19-ի ավագանու թիվ 6-Ա որոշմամբ հաստատված 2-րդ հավելվածի «Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ» բաժնի 6-րդ տողով սահմանված «Էլեկտրիկի օգնական» հաստիքը հանել:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ համայնքապետարանի աշխատակազմում ստեղծվելիք համայնքային ծառայության նոր պաշտոնի մասով, ինչն ուժի մեջ կմտնի ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածների նախարարի կողմից Վայքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկում սույն որոշմամբ պայմանավորված լրացումը կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 33-Ա/

Լսեցին
ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻ

/Զեկ. ԱՆՈՒՇ ՂԱԶԱՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝

1.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու հինգերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2024 թվականի ապրիլի 12–ին, ժամը՝ 15:30–ին:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 34-Ա/

ՀԱՅԿ ԱՎԱԳՅԱՆ

ԱՆՈՒՇ ԱՐԱՄՅԱՆ

ՍԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ

ԱՐՏԱՎԱԶԴ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՍՈՒՍԱՆՆԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ԿՈՍՏԱՆՅԱՆ

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀՐԱՉԻԿ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՈՍԿԱՆՅԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՋԱՆՈՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Անուշ Ղազարյանը

_____